Հավելված 1
Համաձայն ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի
06.06.2022թ. թիվ 22/2022 որոշման

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

«08» հունիսի 2022թ.

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ

Կորպորատիվ անվանական, արժեկտրոնային ոչ փաստաթղթային, առանց ապահովվածության պարտատոմսեր

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է՝ 29.12.2021թ. թիվ 1/664Ա որոշմամբ), դրա լրացումը (գրանցված՝ 03.06.2022թ.-ին թիվ 1/255Ա որոշմամբ) և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ում, ք. Երևան, Ագաթանգեղոսի փող., շենք 2ա հասցեում:

Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված):		
1.	Թողարկողը՝	ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ
2.	Երաշխավորողը՝	-
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)՝	2022-05
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը՝	2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո	Մանրամասն ներկայացված է Ազդագրի 2.3.2 կետում՝ «Առաջարկվող պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն»

	յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	
6.	Թողարկման արժույթը՝	ԱՄՆ դոլար
7.	Առաջարկի գինը՝	Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով $$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{FV}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$ $$\tau = \frac{DSN}{DCC}$$ որտեղ՝ DP - Պարտատոմսի գինն է, DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է, DCC -գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է մեկ տարում, N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը, C - միավոր պարտատոմսի տարեկան արժեկտրոնը, y - մինչև մարում եկամտաբերություն, i – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից, FV- պարտատոմսի անվանական արժեք:
8.	Անվանական արժեքը՝	25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար
9.	Քանակը՝	100,000 (Մեկ հարյուր հազար) հատ
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)՝	21.06.2022թ.
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)՝	27.06.2022թ.
12.	Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ	**AMFNCAB2BER6**

	նմանատիպ տարբերակիչ ծածկագիր՝	
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը՝	Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու վերաբերյալ ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի կողմից 2021 թվականի 28.10.2021թ - ին ընդունված թիվ 34/2021 որոշում՝ դեկտեմբերի 17-ի թիվ 41/2021 և 2022թ. մայիսի 20-ի թիվ 18/2022 որոշումներով սահմանված փոփոխություններով հանդերձ: Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու վերաբերյալ ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի կողմից 06.06.2022 թ.-ին թիվ 22/2022 որոշում:
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը՝	21.06.2022թ.
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը՝	6.5% (Վեց ամբողջ հինգ տասնորդական տոկոս) տարեկան տոկոսադրույքով և եռամսյակային վճարման պարբերականությամբ
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)՝	Արժեկտրոնի վճարման օրերն են՝ 21.09.2022թ. 21.12.2022թ. 21.03.2023թ. 21.06.2023թ. 21.09.2023թ. 21.12.2023թ. 21.03.2024թ. 21.06.2024թ. Արժեկտրոնի վճարումները կատարվում են արժեկտրոնի հաշվարկման օրերին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային օր է. նման դեպքում արժեկտրոնը վճարվում է արժեկտրոնի հաշվարկման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը՝	փաստացի/փաստացի
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը՝	Ոչ կիրառելի
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ՝	Առկա չեն

20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ՝	Ոչ կիրառելի
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21.	Մարման (մասնակի մարումների) ժամկետը՝	Պարտատոմսերի մարման օրն է՝ 21.06.2024թ.: Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/ անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է,ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:
22.	Մարման (մասնակի մարումների) արժեքը՝	անվանական արժեքով
23.	Մարման արժեքի փոփոխությունը	Ոչ կիրառելի
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն՝	Ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
	4) Այլ տեղեկություններ	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն՝	Ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման	Չի նախատեսվում

	մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը՝	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, ՀՀ, ք. Երևան, Բյուզանդի 87, 85-րդ տարածք
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	1. «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ընդ որում՝ 2,125,000 (երկու միլիոն մեկ հարյուր քսանհինգ հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով 85,000 (ութսունհինգ հազար) հատ պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացվելու է ստանդարտ փակ աճուրդի անցկացման միջոցով՝ ընդ որում բացառելով ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտերի ներկայացումը, իսկ մնացած 375,000 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 15,000 (տասնհինգ հազար) հատ պարտատոմսերը ձեռք է բերվելու «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ կողմից անվանական արժեքով՝ որպես շուկա ստեղծող՝ երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիության և ներդրումային գրավչության բարձրացման նպատակով: 2. Տեղաբաշխման աճուրդը իրականացվելու է 5 հաջորդական աշխատանքային օրերի ընթացքում՝ նախորդ տեղաբաշխման օրվա չտեղաբաշխված մնացորդը հաջորդ տեղաբաշխման օր տեղափոխման եղանակով, մինչև Թողարկման վերջնական պայմաններով սահմանված տեղաբաշխման ամբողջական ծավալի տեղաբաշխումը կամ Թողարկողի կողմից աճուրդի տեղաբաշխման ծավալի կտրման կամ աճուրդը չեղյալ հայտարարելու մասին որոշման կայացումը: 3. Տեղաբաշխման աճուրդի յուրաքանչյուր օրվա արդյունքները (տեղաբաշխված ծավալ, կտրման գին, աճուրդի մասնակիցների քանակ և այլ էական մանրամասներ) հրապարակվելու են Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքում (համապատասխանաբար՝ www.finca.am, www.araratbank.am), մինչև տվյալ օրվա 17:30-ը:

<table>
<tr><td></td><td></td><td>4. Տեղաբաշխման աճուրդի յուրաքանչյուր օրվա կտրման գինը ներկայացվում է ստորև՝
<table><tr><th>Ամսաթիվ</th><th>Գինը</th></tr><tr><td>21/06/22</td><td>25.0000</td></tr><tr><td>22/06/22</td><td>25.0044</td></tr><tr><td>23/06/22</td><td>25.0088</td></tr><tr><td>24/06/22</td><td>25.0131</td></tr><tr><td>27/06/22</td><td>25.0263</td></tr></table></td></tr>
<tr><td colspan="3">Այլ տեղեկություններ</td></tr>
<tr><td>28.</td><td>Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն՝</td><td>Արժեթղթերը դեռևս թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրի</td></tr>
<tr><td>29.</td><td>Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկությունների այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))՝</td><td>Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի նպատակով Թողարկողը հնարավորինս սեղմ ժամկետում դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ: Հնարավոր է որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի հայտը չբավարարվի: Տեղաբաշխման ավարտից հետո երեք ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Կազմակերպության խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 2 օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրն արժեկտրոնի հաշվեգրված գումարները:</td></tr>
<tr><td>30.</td><td>Արժեթղթերի վարկանիշը՝</td><td>Ոչ կիրառելի</td></tr>
<tr><td>31.</td><td>Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի</td><td>Թողարկված յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային եկամուտները վճարվելու են եռամսյակային պարբերականությամբ: Արժեկտրոնային եկամուտների վճարման փոխանցումը Կազմակերպության կողմից կատարվելու է արժեկտրոնի հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման</td></tr>
</table>

	սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը՝	վրա, համաձայն որի Կազմակերպությունն արժեկտրոնային եկամտի վճարման օրը վճարումները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին: Թողարկված յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի մարման գումարի փոխանցումը կատարվելու է պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Կազմակերպությունը պարտատոմսերի մարման օրը համապատասխան վճարումները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին: «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքում նշված հաճախորդի հաշվին արժեկտրոնային եկամուտների վճարման կամ մարման գումարի փոխանցման անհնարինության դեպքում Կազմակերպությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ սեփականատերերի վճարումները փոխանցելու է նոտարի դեպոզիտ մինչև հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականների ստացումը, ընդ որում, նոտարի դեպոզիտի ծառայության գումարը վճարվում/հատուցվում է հաճախորդի կողմից:

Թողարկողը (երաշխավորողը) պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը (երաշխավորողը) հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Պատասխանատու անձանց ստորագրություն

Զար Վարդակ	**«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի նախագահ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ֆլորին Լիլա	**«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի անդամ**		08.06.2022
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արարատ Գյուլումյան	**«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի անդամ**		08.06.2022
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Մուրադ Մուրադյան	**«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի անդամ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ռիչարդ Մարնի	**«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի անդամ**	Richard Marney	08.06.2022
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Վարդան Հարոյան	**«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Գլխավոր գործառնական տնօրեն, Գլխավոր տնօրենի/վարչության նախագահի ժ/պ**		08.06.2022
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Անուշ Պետրոսյան	**«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Գլխավոր ֆինանսական տնօրեն**		08.06.2022
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հարություն Չադրյան	**Իրավաբանական վարչության ղեկավար**		08.06.2022
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Միեր Անանյան	**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն**		08.06.2022
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունների իսկությունը հաստատում եմ՝

Վարդան Հարոյան	**«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Գլխավոր գործառնական տնօրեն, Գլխավոր տնօրենի/վարչության նախագահի ժ/պ**		08.06.2022
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)